ԱՐՄԱՎԻՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ[1]

Ինեսա Կարապետյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ nanakarap18@gmail.com
ORCID: 0009-0008-5920-2471

Արմինե Գաբրիելյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Երևանի պետական համալսարան, մշակութաբանության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան փող., 1 շենք
Էլ. հասցե՝ arminegabriel.iae@gmail.com
ORCID: 0000-0002-0424-1931

Հոդվածը ներկայացվել է 30.10.2023, գրախոսվել է 16.01.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-280

Ամփոփում

Հին Հայաստանի մայրաքաղաք Արմավիրը զբաղեցնում է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասում, արևմուտք-արևելք ձգվող բլրաշարքի վրա VIII դարում կառուցված Արգիշտիխինիլի քաղաքը արևելքից եզերող համանուն բլրի գագաթը և դրա շուրջը սփռված Հայկավան, Ջրաշեն, Արտագերս, Արմավիր գյուղերի միջնատարածքը: 1962 թվականից իրականացվող պարբերական ուսումնասիրությունների շնորհիվ հաստատագրվել է Արմավիրի բազմաշերտ բնույթը՝ նախաուրարտական ժամանակաշրջանից (մ.թ.ա. IV-I հազարամյակի սկիզբ) մինչև զարգացած միջնադար (X-XIII դդ.): Ուսումնասիրողների ուշադրությունը հիմնականում ուղղորդված էր միջնաբերդի և քաղաքային թաղամասերի որոշ հատվածների հետազոտության վրա, իսկ դամբարանադաշտի հետազոտության խնդիրը դուրս է մնացել ուշադրությունից: Թեև պետք է նշել, որ, դեռևս XIX դարում իրականացված պեղումներից սկսած, բլրի լանջերին, ստորոտներին, քաղաքային թաղամասերի տարբեր հատվածներում գյուղատնտեսական, շինարարական, ջրացանցի անցկացման աշխատանքներ իրականացնելիս, ժամանակակից գերեզմանոցներում թաղումներ կատարելիս պատահաբար հայտնաբերվել են վաղ բրոնզից մինչև ուշ միջնադարին պատկանող, նաև անտիկ դարաշրջանի դամբարաններ: Դրանցում

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A272 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

թաղումներն արվել են ավանդական՝ հիմնահողային, քարարկղային, ձվածիր քարաշար խցերում և մեր քննության առարկա անոթներում:

Նյութի քննությունը թույլ է տալիս հստակեցնել Արմավիր մայրաքաղաքի անոթային թաղումների սփռվածության սահմանները, դրանց դիրքային կողմնորոշումը երկրի կողմերի նկատմամբ, այդ թաղումների թաղման ծեսի, արարողությունների, ուղեկցող նյութերի առկայության դեպքում դրանց տեսականու ուսումնասիրությամբ վերականգնել մայրաքաղաքի դամբարանադաշտի տեղադրությունը և գոյատևման ժամանակաշրջանը:

Բանալի բառեր՝ Արմավիր մայրաքաղաք, Արգիշթիխինիլի, արևմտյան միջնաբերդ, թաղման ծես, կարասային թաղումներ, հելլենիստական, ուշ անտիկ դամբարանադաշտ:

Ներածություն

Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրը տեղակայված է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասում, արևմուտքից արևելք ձգվող բլրաշարքի վրա կառուցված ուրարտական Արգիշթիխինիլի քաղաքը արևելքից եզերող համանուն բլրի (բարձրությունը՝ 80 մ) գագաթին և շուրջը սփռված Արմավիր, Հայկավան, Ջրաշեն, Արտագերս, Բամբակաշատ գյուղերի միջնատարածքում (աղ. 2, նկ. 1): 1962 թ. ի վեր իրականացվող պարբերական ուսումնասիրությունները թույլ են տվել հաստատագրել Արմավիրի բազմաշերտ բնույթը՝ նախաուրարտական ժամանակաշրջանից (մ.թ.ա. IV-I հազ. սկիզբ) մինչև զարգացած միջնադար (X-XIII դդ.): Հետազոտողների հիմնական ուշադրությունն ուղղորդված է եղել միջնաբերդի ու քաղաքային թաղամասերի որոշ հատվածների հետազոտության վրա, և պեղման պարբերական աշխատանքներն իրականացվել են այդ տեղամասերում: Իսկ յուրաքանչյուր քաղաքի հնագիտական ուսումնասիրության ամբողջականության համար անհրաժեշտ երրորդ օղակի՝ դամբարանադաշտի հետազոտության խնդիրը դուրս է մնացել ուշադրությունից: Թեև պետք է նշել, որ, սկսած դեռևս նախնական պեղումների ժամանակներից, բլրի լանջերին, ստորոտներին, քաղաքային թաղամասերի տարբեր հատվածներում գյուղատնտեսական, շինարարական, ջրացանցի անցկացման աշխատանքներ իրականացնելիս, ժամանակակից գերեզմանոցներում թաղումներ կատարելիս պատահաբար հայտնաբերվել են վաղ բրոնզից մինչև ուշ միջնադարին պատկանող, ինչպես նաև անտիկ դարաշրջանի դամբարաններ: Դրանք պարբերաբար բացվել են Արմավիր բլրի արևելյան, հյուսիսային, արևմտյան ստորոտների ու քաղաքային թաղամասերի տարածքներում և ուրարտական Արգիշթիխինիլի քաղաքի արևմտյան միջնաբերդի, ներքին ու արտաքին քաղաքային թաղամասերի շինությունները և Արգիշթիխինիլիի դամբարանադաշտը ծածկող վերին հողաշերտերում: Այդ դամբարաններում թաղում-

ներն արվել են ավանդական հիմնահողային, քարարկղային, ձվածիր քարաշար խցերում և մեր քննության առարկա անոթներում:

Անոթային թաղումների հայտնաբերման ժամանակագրական, տեղադրության և շերտագրական հանգամանքները

Արմավիրում ամենավաղ հայտնաբերված դամբարանները Ա. Ուվարովի և Ա. Երիցյանի՝ 1880 թ. հետախուզական զննումների ժամանակ Արմավիր բլրի արևելյան և հյուսիսարևելյան լանջերին ու ստորոտում հայտնաբերված տարբեր դարաշրջանների թաղումներն են (աղ. 1, կարասային թաղում (ԿԹ) N 21, 22)[2]: Այդ թաղումների ուղեկցող նյութերը խառնված վիճակում տեղ են գտել Վրաստանի պետական թանգարանում, և միայն 1944 թ. Բ. Կուֆտինը բրոնզեդարյան, ուրարտական, սասանյան նյութերից տարանջատել է անտիկ անոթային թաղումների նյութերը և հրատարակել[3]: Դրանք գունազարդ և առանց հարդարանքի ամբողջական ու բեկորացված խեցեղեն (աղ. 3, նկ. 2), ներճկված ապարանջաններ, ապակե և մածուկե բազմագույն ուլունքներ են, որոնք թվագրվել են ձևակազմական, հարդարման, նախշազարդման հատկանիշներով ու մյուս հուշարձաններից հայտնի նմանատիպ օրինակների հետ զուգահեռներ անցկացնելու մեթոդով: Ցավոք, նյութերի պատկանելությունը, ըստ իրենց դամբարանների, անհնար է եղել պարզել:

Հաջորդը **1935 թ.** Նոր Արմավիր գյուղի բնակիչ Ամասիա Հարությունյանի հայտնաբերած՝ քանդված դամբարանն է Արգիշթիխինիլիի արտաքին քաղաքի արևելյան ծայրում (աղ. 1, ԿԹ N 10) (Արմավիրի քաղաքային արևմտյան թաղամասում): Դրա թաղման գույքից պահպանվել են հելլենիստական խեցեգործության բնորոշ օրինակներ՝ բազմագույն զարդանախշով հարդարված ծորակավոր անոթի մի մեծ բեկոր և ներգծված երկգույն եռանկյունիներ կրող ալաբաստրոնաձև անոթ (աղ. 3, նկ. 1, 3, 10): Այս նյութերը գիտական շրջանառության մեջ է դրել Եվգենի Բայբուրդյանը՝ դրանք վերագրելով հելլենիստական մշակույթին[4]:

1936 թ. Ս. Տեր-Հակոբյանը հրատարակեց այդ նույն տարածքում քանդված մեկ այլ դամբարանի նյութեր՝ կրծքազարդի չորս ոսկյա կախիկները, ալաբաստրոնաձև անոթը, նիզակակիր հեծյալի պատկերը կրող քարե բազմանիստը և քարե սկահակը[5]: Այս նյութերը բազմիցս հրատարակվել են

[2] Уваров 1882, 439-449, Уварова 1902, 128.
[3] Куфтин 1944, 21-23, 59-60, 92-96.
[4] Բայբուրդյան 1937, 291:
[5] Տեր-Հակոբյան 1936, 145-150:

անտիկ դարաշրջանի մասնագետների կողմից՝ թվագրվելով մ.թ.ա. III–I դարերով[6]:

Հերթական կարասային թաղումը բացվել է **1972 թ.** Արմավիրի հնագիտական արշավախմբի պեղումների ժամանակ միջնաբերդի արևմտյան տեղամասում՝ Արգիշթի Ա-ի կառուցած պարսպապատի չորրորդ որմնահեցի հարավարևմտյան անկյունում (աղ. 1, ԿԹ N 19) (5i քառ.): Ավելի ուշ շրջանում կառուցվել է դրան անմիջապես հպված սենյակի պատը: Կարասի և դրան հարակից պատի շերտագրական առնչությունը թույլ է տալիս կարծելու, որ կարասը կոտրվել է այդ ուշ շրջանի պատի հիմքերը դնելիս (աղ. 2, նկ. 4):

Կարասը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությամբ, հորիզոնական դիրքով իջեցված էր հիմնաժայռը ծածկող մշակութային շերտի մեջ: Անոթի վերնամասի մի հատվածը, որը, ծեսի համաձայն, ննջեցյալին կարասում տեղավորելու համար հեռացված և հետո վերադարձված է եղել իր տեղը, ընկած էր անոթի մեջ: Քայքայված կմախքը խառնված էր կարասի մեջ լցված կավահողի և անհատի հետ դրված նյութերի հետ: Արտաքուստ բաց կարմրավուն, լայնաբերան կարասի հարթ, դուրս ձգված եզրաշուրթը սահուն կերպով միանում է կարճ վզին, որից իրանը անմիջապես լայնանում, ապա աստիճանաբար նեղանալով միանում է փոքրիկ նստուկին (բարձ.՝ 1,2 մ, շուրթի տր.՝ 42 սմ, իրանի լայն.՝ 94 սմ, նստուկի տր.՝ 24 սմ): Կարասների այս ձևը Արմավիրում փաստագրված բազմատեսակ կարասների մեջ ամենատարածվածն է: Թաղման՝ բավական առատ և հետաքրքիր գույքը ներառում էր գունազարդ անոթների բեկորներ, հելլենիստական Արևելքում լայն տարածում ունեցող մայր աստվածուհու պաշտամունքը ներկայացնող մոր ու մանկան թրծակավային արձանիկ (տերրակոտա), արտաքինից սև լաքով պատված կավե սրվակ՝ ունգվենտարիում (աղ. 3, նկ. 9), որի ձևը, կավի բաղադրությունն ու որակը թույլ են տալիս թաղումը թվագրել վաղ հելլենիստական ժամանակաշրջանով՝ հավանաբար մ.թ.ա. III-I դարերով[7]: Միասայր, փոքր խաչարդով կեռ դանակ-դաշույնը, որը տիպաբանորեն ներկայացնում է մ.թ.ա. VII դ. վերջերից հանդես եկող կեռ շեղբով, հաստավուն կոնակով դանակների ավարտուն ձևը, այս դամբարանում հանդես է գալիս որպես վաղ հայկական և հելլենիստական մշակույթների ավանդական թվագրող ձև: Սերդոլիկե, ապակե, մածուկե ուլունքները և գունազարդ անոթների բեկորները հաստատում են առաջարկված թվագրումը: Արմավիրի միջնաբերդի ծայր արևմտյան հատվածում այս թաղման առկայությունը կարծես հուշում է, որ երկու պարիսպների միջնատարածքը վաղ հելլենիստական ժամանակաշրջանում դեռևս ընդգրկված չի եղել Երվանդյան վերակառուցման (մ.թ.ա. IV-II դարեր) գործընթացների մեջ:

---

[6] Аракелян 1976, 124, Խաչատրյան 1978, 46-55, Тирацян 1971, Тирацян 1988, 142-143:

[7] Տիրացյան 1974, 50-51:

1975 թ. Արմավիրի քաղաքային թաղամասի հարավարևմտյան հատվածի պեղումների ժամանակ բացված բնակարանային մեծ համալիրից հյուսիս՝ **«թթենիների տեղամաս»** կոչված պեղման միավորում, հայտնաբերվել են կոտրված կարասների և խեցանոթների բեկորների վրա բարձրացված տնտեսական շինության քարե պատեր: Սարդարապատի թանգարանին հանձնված նյութերի գույքացուցակների շնորհիվ պարզվեց, որ այդտեղ ևս վավերացվել են մի քանի կարասային թաղումներ (աղ. 1, ԿԹ N 11, 12, աղ. 2, նկ. 2, 3, 5): Դրանց բեկորների միջավայրում գտնվել են գունազարդ տափաշիշ, կճուճիկ, արծվի քանդակի ձևով կերտված անոթի մաս, ալաբաստրոնե փոքրիկ անոթ, խեցանոթի մաս կազմող ձիուկի գլխիկ (աղ. 3, նկ. 8, 7, 5, 6, 4, գույք N 287/17, 18, 23, 44, N 289/12), կենդանու ոտքի բեկորներ, ներճկված կողով գունազարդ թաս և կանթավոր կճուճի կես (աղ. 3, նկ. 11, գույք N 288/12, 13, 17), բրոնզե օձագլուխ ապարանջան, ականջող, կնքամատանի և մեկ շար սերդոլիկե, ապակուց ու մածուկից պատրաստված տարբեր տեսակի հուլունքներ[8]: **1977 թ.** պեղումների ժամանակ այս տարածքում հայտնաբերվել են նաև քարարկղային թաղումներ՝ նույնատեսակ գույքով[9]: Այս նյութերը՝ իրենց ձևակազմական, որակական, գործառական հատկանիշներով, քաղաքի բարձր խավի կարգավիճակի նյութական վկայություններն են և պետք է թվագրվեն Հայաստանի վերականգնված թագավորության Երվանդյան դարաշրջանով՝ մ.թ.ա. IV-II դարերով: Այս տվյալները թույլ են տալիս մտածելու, որ տարածքը եղել է հելլենիստական բնակավայրի դամբարանադաշտը և քաղաքի ընդարձակման անհրաժեշտության թելադրանքով մնացել է քաղաքային նոր թաղամասի կառույցների տակ. մի երևույթ, որ եղել էր ուրարտական քաղաքի ծայր արևմտյան հատվածում[10]: Այստեղ արգիշթիի ժամանակաշրջանի դամբարանադաշտը նույն անհրաժեշտությամբ ծածկվել էր սարդուրյան նորակառույց թաղամասով:

Արմավիր բլրի արևմտյան ստորոտում սփռված Ջրաշեն գյուղի ժամանակակից գերեզմանոցում հուղարկավորություններ կատարելիս 1960-80-ական թվականներին շարունակաբար ավերվել են անտիկ շրջանի կարասային թաղումներ (աղ. 1, ԿԹ N 16, 17, 18). դրա մասին մեզ հաղորդել են գյուղի բնակիչները՝ առանց որևէ տվյալ ներկայացնելու այդ թաղումներից գտնված նյութերի վերաբերյալ[11]: Միայն պատմել են **1985 թ.** ավերված մի կարասային դամբարանի մասին, ասել, որ կարասում պահպանված

---

[8] Սարդարապատի թանգարանում պահվող վերոնշյալ նյութերից օգտվելու թույլտվության, տրամադրված տեղեկատվության և աջակցության համար մեր երախտագիտությունն ենք հայտնում թանգարանի տնօրինությանը՝ ի մասնավորի փոխտնօրեն, պ.գ.թ. Սվետլանա Պողոսյանին:

[9] Այս տարիներին Արգիշթիխինիլի պեղումները ղեկավարել է պ.գ.թ. Ռ. Թորոսյանը: Նյութերը հրատարակված չեն:

[10] Мартиросян 1974, 57.

[11] Կարապետյան 1978, Արմավիրի դաշտային օրագիր, 1-3:

են եղել հանգուցյալի գանգը, մեկ ապարանջան և գունազարդ թաս: Դրանցից միայն կոտրված թասն են հանձնել մեզ[12]: Թասն արմավիրյան խեցեգործության ամենաբնորոշ տեսակներից է: Այս թասերի կլորավուն, վեր ձգվող կողերը գեղեցիկ ներճկումով միանում են դուրս հակված սուր շուրթեզրին: Ներսը զարդանախշված է անոթի հատակից վեր ձգվող խաչաձև կամ ճառագայթաձև ժապավեններով: Հանդիպում են այդ թասերի՝ կարմիր, շագանակագույն և գորշամոխրավուն տեսակները, որոնք զարդարված են հիմնագույնից ավելի մուգ երանգով և պաշտամունքային որոշակի պատկերացումների արդյունք են: Դրանք կապվում են արևի պաշտամունքի հետ[13] և առավելապես հանդիպում են պաշտամունքային-տաճարային բնակավայրերում՝ Արմավիր, Էրեբունի, Աստղի բլուր, Բերդատեղ, Արտաշատ, Գառնի[14], երբեմն էլ դամբարաններում՝ Արմավիր, Կարճաղբյուր, Աստղի բլուր և այլն:

1983 թ. Արմավիրից հյուսիս-արևելք ընկած Բամբակաշատ գյուղի բնակիչները մեզ հայտնել էին «Մոլլա Բադալ» կոչվող հանդամասում գարնանային վարի ժամանակ բացված շինության պատերի, կոտրված հելլենիստական խեցեղենի և կարասային թաղումների մասին (աղ. 1, ԿԹ N 13)[15]: Նրանք համաձայնվել էին չշարունակել վարը մինչև մեր ժամանումը, սակայն շարունակել էին, ավերել կառույցները և հեռացրել քարերը: Մեր այցի ժամանակ մենք տեսանք միայն արդեն ցիրուցան եղած խեցեղեն բեկորներ: Ըստ գյուղացիների, հայտնաբերված նյութերի մի մասը հանձնվել է Սարդարապատի թանգարանին (գույք N 4273/ 63, 68-73):

1989 թ. Ջրաշենից Բամբակաշատ գնացող միջգյուղական խճուղում՝ Ջրաշենի անասնագոմերի հարևանությամբ, քանդված կարասային թաղման մեջ (աղ. 1, ԿԹ N 15) գտնվել են մ.թ. I դարի հռոմեական հունատառ արծաթյա դրամ և ապակե սրվակ[16]: Դրամի արձանագրությունը ընթերցել է Արմավիրի արշավախմբի անդամ պ.գ.դ. Սիմոն Կրկաշարյանը՝ պարզելով, որ այն պատկանել է Լուկիուս Ավրելիոս Վերուսին (162 թ.): Հայաստանում հայտնաբերվել են նաև վերջինիս՝ Արտաշատի դրամահատարանում հատած պղնձյա դրամները [17]:

1994 թ. Արմավիր բլրի հյուսիսարևելյան ստորոտում ուշ բրոնզի և վաղ երկաթի դամբարանների միջավայրում (Ա. Ուվարովի պեղումների տարածքում) նոր գերեզման փորելիս բացվել է մեկ այլ կարասային թաղում (աղ. 1, ԿԹ N 20), որի գույքից գերեզմանափորը պահպանել և մեզ է հանձնել

[12] Կարապետյան 1985, Արմավիրի դաշտային օրագիր, 30-31:
[13] Կարապետյան 1974, 279:
[14] Կարապետյան 2003, 20:
[15] Կարապետյան 1983 թ., Արմավիրի դաշտային օրագիր, 1-2:
[16] Կարապետյան 1989 թ., Արմավիրի դաշտային օրագիր, 16-18:
[17] Վարդանյան 2004, 234-253:

կարասը, մեկ բրոնզե ապարանջան և երկու հուլունք[18]: Կարասը չափերով, ձևակազմական, արտաքին մակերեսի հարդարման և քսուքապատման հատկանիշներով կրկնում է Արմավիրի միջնաբերդում 1972 թ. հայտնաբերված թաղման կարասը և միևնույն խեցեգործական արհեստանոցի արտադրանք է: Նմանատիպ կարասներ հայտնաբերվել են նաև Դվինի անտիկ դամբարանադաշտում և Մոխրաբլուրի հուշարձանի անտիկ շերտում[19]:

Ջրաշենի հարավարևելյան ծայրամասում ապրող Սամվել Մելիքյանի տնամերձ այգում 2000-ական թթ. սկզբներին պարբերաբար հայտնաբերվող ուշ անտիկ դամբարանների մեջ եղել են նաև կարասային թաղումներ (աղ. 1, ԿԹ N 14): Դրանցից մեկում **2006 թ.** գտնվել է Սասանյան Ներսեհ (293-303 թթ.) թագավորի արծաթ դրամը[20]: Այն Ներսեհի դրամների միակ՝ գրանցված օրինակն է Հայաստանի տարածքում: Այդ գտածոն կարևորվում է հատկապես նրանով, որ Ներսեհը, մինչև Պարսկաստանի արքայից արքա դառնալը, կրել է «Հայոց մեծ արքա» տիտղոսը[21]: Ցավոք, դրամի տերը չի ցանկացել այն հանձնել թանգարան, ուստի դրամի ճակատագիրը, ինչպես նաև նախորդինը, անհայտ է: Չորրորդ դարի դրամի առկայությունը կարասային թաղման մեջ հաստատում է այն կարծիքը, որ կարասով թաղումներ կատարելու ավանդույթը շարունակվել է IV դ. սկզբներին ևս: Կարասային թաղումների ուսումնասիրության իրականացման ընթացքում բացահայտված այս երկու դրամները Արմավիր մայրաքաղաքի թաղամասերից հայտնաբերված դրամների քանակը հասցրեցին չորսի: Հռոդոսյան հեմիդրահիման (մ.թ.ա. IV-III դդ.), Սելևկյան Ֆիլիպոս I-ի՝ Անտիոքում թողարկած տետրադրահիման (մ.թ.ա. I դարի երկրորդ կես)[22], Լուցիուս Վերուսի արծաթե դրամը (մ.թ. I դ.) և Սասանյան Ներսեհի արծաթե դրամը (մ.թ. III դ. վերջ – IV դ. սկիզբ) կարծես ընդգրկում են ողջ անտիկ դարաշրջանը (մ.թ.ա. IV – մ.թ. IV դ.) և օգնում են ճշգրտել անտիկ քաղաքի գոյատևման փուլերը:

Արմավիրի կարասային թաղումների տեղադրումը Արգիշթիխինիլի-Արմավիրի տեղագրական հատակագծի (հանույթի) վրա ցույց է տալիս, որ բլրի և քաղաքի թաղամասերի արևմտյան և հյուսիսային ծայրամասերի տարածքներում բացված դամբարանների թիվը գերազանցում է բլրի մյուս հատվածներում հայտնաբերվածներին: Դրանք Արմավիր բլրից ձգվում են դեպի արևմուտք և անցնում են ուրարտական քաղաքի տարածքներ:

---

[18] Կարապետյան 1994 թ. Արմավիրի դաշտային օրագիր, 23-24:
[19] Քոչարյան 1980, 284:
[20] Կարապետյան 2006, Արմավիրի դաշտային օրագիր, 7-9:
[21] Զոհրաբյան 2021, 29-30:
[22] Մուշեղյան 1983, 31, Зардарян 1977, 271:



Աղյուսակ 1. Արգիշթիխինիլի-Արմավիրի հուշարձանների հանույթը: Հատակագիծը՝ Կորյուն Ղաֆադարյանի, Արմավիրի միջնաբերդի հավելումները՝ ըստ Լիլիթ Մինասյանի: Կարասային թաղումների տեղորոշման քարտեզը՝ ըստ Ինեսա Կարապետյանի և Արմինե Գաբրիելյանի, ձևավորումը՝ Անահիտ Գալստյանի

1

2

3

4

5

Աղյուսակ 2. նկ. 1 – Հուշարձանի պատկերը Google earth
նկ. 2, 3, 5 – «Թթենիների թաղամասը» (լուսանկարները՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից), նկ. 4 – Արմավիրի միջնաբերդի արևմտյան թաղամասում բացված ԿԹ (լուսանկարը՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից)

Աղյուսակ 3. Արգիշթիխինիլի-Արմավիրի տարածքում հայտնաբերված անոթային թաղումների նյութերը: Նկ. 1-3 – Мартиросян 1974, рис. 22, 23 а, б, նկ. 4-8, 11 – լուսանկարները՝ Սարդարապատի թանգարանի ֆոնդից, նկ. 9-10 – լուսանկարները՝ Արմավիրի հնագիտական արշավախմբի արխիվից



Աղյուսակ 4. Ս. Աբգարյանի հողատարածքում բացված կարասային թաղման գույքը (մ.թ.ա. IV-IV դդ., լուսանկարները՝ Վռամ Հակոբյանի)

Արգիշթիխինիլիի անտիկ անոթային թաղումները

Արգիշթիխինիլիի ներքին և արտաքին քաղաքային թաղամասերի մենատների սենյակներում և դամբարանադաշտում բացվել են հիմնահողային, քառանկյուն քարարկղներում, ձվածիր քարաշար խցերում և խեցանոթներում կատարված անտիկ դարաշրջանի թաղումներ: Թաղումների շերտագրական տեղադրությունը և թաղման ուղեկցող նյութերը կասկած չեն թողնում դրանց՝ հետուրարտական և անտիկ դարաշրջաններին պատկանելու հարցում[23]:

Անտիկ առաջին անոթային թաղումը բացվել է Արգիշթիխինիլիի պեղումների հենց առաջին տարում՝ **1964 թ.,** D բլրի ստորոտը զբաղեցնող, արտաքին քաղաքի երկրորդ թաղամասի N 4 շինության մեջ (աղ. 1, ԿԹ N 8): Այն իջեցված էր ուրարտական պատի շարվածքից ցած, հատակից 10-15 սմ վեր, ուրարտական մշակութային շերտում: Անոթը պարունակում էր երեխայի գանգի կտորներ, վզի ողեր և փոքր կենդանու՝ հավանաբար շան ոսկորներ[24]:

1965 թ. Նոր Արմավիրից Ամասիա գնացող խճուղու աջ ոլորանում, Դավթի բլրից 150-200 մ հեռավորության վրա բացված թաղումը կատարված էր հողի մեջ ուղղահայաց իջեցված ծափի մեջ (բարձր.՝ 70 սմ, շուրթի տր.՝ 30 սմ, իրանի լայն.՝ 60 սմ, նստուկի տր.՝ 32 սմ) (աղ. 1, ԿԹ N 1): Այն ձեռածեփ էր, անհամաչափ ձևավորած կողերով և վատ էր թրծված: Նստուկին պահպանվել էր խսիրե հյուսվածքի դաջվածքը, որի վրա դրված՝ պատրաստվել էր ծափը: Ծափի բերանը փակված էր սալաքարով, ծեփված՝ կավաշաղախով: Անոթը պարունակում էր միայն դիակիզվածի մոխիրը[25]:

1965 թ. այս թաղումից 1,5 մ հեռավորության վրա նույն ուղղահայաց դիրքով թաղված խիստ մրապատ կճուճում (բարձր.՝ 35 սմ, շուրթի տր.՝ 21 սմ, իրանի լայն.՝ 30 սմ, նստուկի տր.՝ 13 սմ) ամփոփված էին մեկ տարեկան երեխայի ոսկորներ[26]՝ առանց ուղեկցող նյութերի (աղ. 1, ԿԹ N 2):

Արգիշթիխինիլիի ներքին քաղաքի երկրորդ թաղամասում հայտնաբերված թաղումներից մեկը կատարված էր բանկայատիպ, կլոր նստուկով, երկարուկ իրանով և նեղ վզով մոխրանարնջագույն երանգի անոթի մեջ (աղ. 1, ԿԹ N 3)[27]: Նույն տեղում արված երկրորդ թաղման անոթը նախորդից տարբերվում էր միայն արտաքին մուգ շագանակագույն գույնով և փայլեցման հետքերով (աղ. 1, ԿԹ N 4)[28]: Այս նույն տարածքում հայտնաբերվել են ևս երեք անոթային թաղումներ՝ բեկորային վիճակում (աղ. 1,

[23] Мартиросян 1974, 55.
[24] Мартиросян 1974, 55, рис. 15.
[25] Мартиросян 1974, 51, рис. 17 ա.
[26] Мартиросян 1974, 51, рис. 17 բ.
[27] Мартиросян 1974, 58, рис. 20/3.
[28] Мартиросян 1974, 58, рис. 20/4.

ԿԹ N 5, 6, 7): Վերոնշյալ անոթային թաղումներն ուղեկցող գույք չեն ունեցել և հանդես են եկել թաղման մյուս կառուցածների հետ միասին:

Անոթային թաղումներ բացահայտվել են նաև Արգիշթիխինիլի ներքին քաղաքային թաղամասերում: Այսպես՝ երկրորդ թաղամասի N 7 տան ավերակների պեղումների ժամանակ ուրարտական մշակութային շերտի մեջ հայտնաբերվել են անտիկ շրջանի մանկական թաղումներ՝ միջին չափի կարասների բեկորների միջավայրում[29], իսկ երրորդ քաղաքային թաղամասի N 1 տանն ապրող կնիքագործի արհեստանոցի փլատակների մեջ գտնվել է բեկորացված կարաս՝ պղնձե լարից պատրաստված մատանիներ ունեցող մեծահասակ զույգի կմախքներով[30]:

Ուշ շրջանի այս թաղումներից առանձնանում է Նոր Արմավիրի բնակիչ Սամվել Աբգարյանի հողամասում **1999 թ.** հայտնաբերված՝ ուրարտական քաղաքի հյուսիսարևելյան ծայրամասում գտնվող կարասային թաղումը (աղ. 1, ԿԹ N 9): Բնակարանի հիմքերի խրամուղին փորելիս Աբգարյանը 90 սմ խորության մեջ տեսել է շինության պատերի մնացորդներ: Դրանցից 10 մ հեռավորության վրա, գետնի արտաքին մակերեսից 40 սմ խորության մեջ բացվել էր կարասային թաղում: Ըստ Աբգարյանի՝ դիաթաղում պարունակող բեկորացված կարասում թաղման գույքի հետ խառնված անհատի ոսկորները եղել են խիստ քայքայված վիճակում: Մեզ հանձնված թաղման գույքը կազմված էր միայն խեցանոթներից՝ ցածրադիր իրանով երկկանթ սափոր, ներս հակված շուրթով կլոր թաս, կիսաձվաձիր խորունկ գավաթ, ձեռածեփ տեխնիկայով պատրաստված միջնորմավոր ձիթաճրագ, մի փոքրիկ աղաման և այծի եղջյուրի մշակված բեկոր[31]: Խեցեղենն իր ձևակազմական հատկանիշներով ուրարտական նույնաձև խեցեղենի օրգանական շարունակությունն է՝ իրականացված վաղ հայկական խեցեգործության պատրաստման տեխնիկական ու հարդարման հատկանիշներով, և թվագրվում է մ.թ.ա. V-IV դարերով (աղ. 4):

Քանի որ այս դամբարանը տեղակայված է Նոր Արմավիր գյուղի տակ սփռված Արգիշթիխինիլի դամբարանադաշտի հյուսիսարևելյան ծայրամասում, ապա մեզ թույլ է տալիս առաջ քաշել վարկած, ըստ որի՝ Արմավիրի բնակիչները վաղ հայկական (Երվանդյան), հելլենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջաններում իրենց թաղումները, ժառանգական կապի և սովորույթի համաձայն, կատարել են ուրարտական դամբարանադաշտում, քանի որ բիայնական պետական կառույցի անկումից հետո էլ բնակչությունը շարունակել է կենսագործունեությունը իր ապրած վայրերում և թաղումներ կատարել նախկին դամբարանադաշտերում:

---

[29] Мартиросян 1974, 117.

[30] Мартиросян 1974, 119.

[31] Կարապետյան 1999, Արմավիրի դաշտային օրագիր, 3-4:

Արմավիր մայրաքաղաքի բնակիչները թաղումներ են կատարել նաև ուրարտական քաղաքի ներքին և արտաքին թաղամասերի բնակարաններում, հատակներից 10-15 սմ վեր, ուրարտական մշակութային շերտում: Այս թաղումները հետագայում ծածկվել են դրանց վրա շրջված պատերի աղյուսե վերնամասերով: Սա թույլ է տալիս համաձայնվել Հ. Մարտիրոսյանի այն եզրահանգման հետ, որ հետուրարտական թաղումները սկսել են կատարվել այն շրջանում, երբ ուրարտական պատերը դեռևս կանգուն են եղել[32]: Այս դիտարկումները ցույց են տալիս, որ Արմավիր մայրաքաղաքի դամբարանադաշտն ավելի ընդարձակ է եղել և ընդգրկել է նաև ուրարտական ներքին քաղաքի երկրորդ և երրորդ թաղամասերը: Թաղումների շերտագրական տեղադրությունը և դրանց ուղեկցող հատուկենտ նյութերը վկայում են դրանց՝ հետուրարտական և անտիկ դարաշրջաններին պատկանելու մասին:

Եզրակացություններ

Սույն հոդվածում Արմավիր մայրաքաղաքի՝ տարբեր տարիների պեղումների ընթացքում հայտնաբերված, հրատարակված և չհրատարակված անոթային դամբարանների տեղորոշման, հաշվառման, թանգարանների ֆոնդերում դրանց թաղումների գույքի հայտնաբերման, քննության, դամբարանների մյուս տեսակների նյութերից տարբերակման մեթոդով ճշգրտվել են Արմավիր մայրաքաղաքի դամբարանադաշտի տեղադրությունը և դրա սփռվածության սահմանները: Քննության ենթարկված անոթային թաղումները վավերացվել են Արմավիր բլրի լանջերին, ստորոտներին, քաղաքային թաղամասերում և բիայնական պետական համակարգի փլուզումից հետո՝ նաև Արգիշթիխինիլիի արևմտյան միջնաբերդի ներքին ու արտաքին թաղամասերի լքված բնակարանները ծածկող կավահողային շերտերում և ուրարտական դամբարանադաշտում: Որպես թաղման անոթ են ծառայել տնտեսության մեջ օգտագործված և մաշված կարասները, ծափերը, տարբեր ձևերի կճուճները, թեև երբեմն հանդիպում են նաև թաղման համար հատուկ պատրաստված և ներմուծված տեսակի կրկնօրինակված անոթներ: Դամբարանադաշտում անոթային թաղումները հայտնաբերվել են հնագույն ավանդական կառուցաձև ունեցող դամբարանների միջավայրում, որոնց հետ քանակական հարաբերակցության քննությամբ էլ ներկայացվել են քսանից ավելի ամբողջական և բեկորացված անոթային թաղումները: Ուսումնասիրվել են անոթային թաղումներում կատարված ծեսի և ուղեկից արարողությունների հատկանիշները. դրանք են՝ դին անոթում տեղադրելու համար կարասի շուրթի և ուսամասի մի հատվածի հեռացման, ապա կրկին իր տեղը դնելու գործառույթը, կծկված վիճակում, աջ կամ ձախ կողի վրա դիադրման իրականացումը, անոթային թաղումները մայր հողի մեջ հորիզո-

[32] Мартиросян 1974, 58.

նական կամ ուղղահայաց դիրքով իջեցումը: Հորիզոնական դիրքով թաղման դեպքում կարասն ունենում է երկրի կողմերի նկատմամբ տարբեր ուղղվածություն, որն ուշ անտիկ դարաշրջանից աստիճանաբար սկսում է դառնալ հաստատուն՝ արևելք-արևմուտք: Ուղղահայաց դիրքով թաղված անոթներում կմախքի դիրքը երբեմն թվում է կքանստած, իսկ մեծ մասամբ՝ մարմնի մկանային հյուսվածքների փտելուց հետո, ոսկորները թափված, խառը կուտակված են լինում անոթի հատակին: Կարծում ենք՝ երկրորդ՝ ուղղահայաց դիրքը հարմար է եղել դիակիզմամբ թաղման համար, քանի որ դիակիզման ծեսը հաճախ է հանդիպում նախորդ՝ ուրարտական ժամանակաշրջանի կարասային թաղումներում[33]: Հետազոտության ընթացքում կարասային դամբարանների տեղավայրերի վավերացումը օգնեց պարզելու, որ Արմավիրի դամաբարանադաշտը նախապես (մ.թ.ա. VI-IV դդ.) զբաղեցրել է արևմտյան և հյուսիսարևմտյան քաղաքային թաղամասերից 1-1,5 կմ հեռավորությամբ գտնվող տեղամասերը: Այդ թաղումների գույքի՝ աչքի ընկնող առատությունը, թվագրող հատկանիշները, երկրում զարգացող արհեստների ու առևտրի բարձր մակարդակ փաստող տվյալները հերթական անգամ վկայում են, որ ուրարտական քաղաքի արևելյան միջնաբերդն ու սրբազան քաղաք Արմավիրը Հայկական լեռնաշխարհում բիայնական պետական համակարգի լուծարվելուց հետո պահպանվել են, իսկ տաճարական համայնքը դարձել է քաղաքն ու տարածաշրջանը կառավարող մարմին: Մ.թ.ա. IV դ. վերականգնված Երվանդյան թագավորության մայրաքաղաքի թաղամասերի ընդարձակման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դամբարանադաշտը ևս ընդարձակվել է դեպի արևմուտք: Այն գրավել է Արգիշթիխինիլիի վերին՝ 20-70 սմ թանձրության ուրարտական մշակութային շերտը: Այստեղ բացված անոթային թաղումները, բացառությամբ մի երկուսի մեջ հանդիպած խիստ սակավ նյութերի, զուրկ են ուղեկցող գույքից, կատարված են միայն դիադրման ծեսով և հիմնականում մանկական թաղումներ են: Այս հատկանիշներով դրանք թվագրվում են ուշ անտիկ՝ մ.թ. II դ. վերջ - III դարով: Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ այս երևույթը համընդհանուր է Հայաստանում հայտնաբերված համաժամանակյա բնակավայրերի (Գառնի, Արտաշատ, Կարճաղբյուր, Մաստարա, Թալին, Բենիամին, Օշական և այլ) կարասային դամբարանադաշտերում:

Օգտագործված գրականություն

Բայբուրդյան Եվ. 1937, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, ՀԽՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր, գիրք 2, Երևան, էջ 268-308:

Զոհրաբյան Ա. 2021, Հայաստանի դրամական տնտեսությունը III-X դարերում (սասանյան և արաբական ժամանակաշրջաններ), Երևան, «Անտարես», 151 էջ:

[33] Մարտիրոսյան, Թորոսյան 1986, Karapetyan, Yengibaryan 2010:

Խաչատրյան Ժ. 1978, Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները (մ.թ.ա. II-I-ին դդ.), ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, N 5, էջ 46-55:
Կարապետյան Ի. 1974, Մ.թ.ա. VI–III դդ. վաղ հայկական թասերի մի խումբ, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), N 3, էջ 276-280:
Կարապետյան Ի. 1978 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
Կարապետյան Ի. 1983 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
Կարապետյան Ի. 1985 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
Կարապետյան Ի. 1989 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
Կարապետյան Ի. 1994 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
Կարապետյան Ի. 1999 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
Կարապետյան Ի. 2003, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 19, Երևան, «Գիտություն», 112 էջ, աղ. 56:
Կարապետյան Ի. 2006 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ. 1986, Արգիշտիխինիլիի սարկոֆագը, ՊԲՀ, N 3, էջ 221-227:
Մուշեղյան Խ. 1983, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 352 էջ:
Վարդանյան Ռ. 2004, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամ-ներ, ՊԲՀ, N 2, էջ 234-253:
Տեր-Հակոբյան Ս. 1936, Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը, Աշխատու-թյուններ ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի, հ. 1, Երևան, էջ 145-150:
Տիրացյան Գ. 1974, Արմավիրի պեղումները, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, էջ 50-57:
Տիրացյան Գ. 1980, Արմավիրի պեղումները (առաջին պեղումների 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, N 2, էջ 23-29:
Քոչարյան Գ. 1980, Հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտ Դվինում, ՊԲՀ, N 2, էջ 277-285:
Аракелян Б. 1976, Очерки по истории искусства древней Армении, Ереван, изд. АН АССР, 124 с.
Есаян С., Биягов Л., Амаякян С., Канецян А. 1991, Биайнская гробница в Ереване, Архео-логические памятники Армении N 15, Ереван, изд. АН Армении, 48 с.
Зардарян М. 1977, Амфоры из раскопок Арташата, ИФЖ, N 1, с. 266-269.
Куфтин Б. 1944, Урартский колумбарий у подошвы Арарата и куро-аракский энеолит, «Вестник Государственного музея Грузии», вып. XIII-B, Тбилиси, 172 с.
Мартиросян А. 1974, Аргиштихинили, Археологические раскопки в Армении, вып. 1, Урартские памятники, Ереван, изд. АН Армянской ССР, 175 с.
Тирацян Г. 1971, Об одной группе расписных сосудов из Армавира (Армения), Советская археология, N 2, с. 246-249.
Тирацян Г. 1988, Культура древней Армении, Ереван, «Гитутюн», 204 с.
Уваров А. 1882, Исследование местности, на которой предполагались развалины Ар-мавира, Пятый археологический съезд в Тифлисе, Москва, Синодальная типо-графия, с. 439-449.
Уварова П. 1902, Коллекция Кавказского музея, т. V, Археология, Тифлис, Типографія канцеляріи главночальствующаго гражданскою частію на Кавказе, с. 128-130.
Karapetyan I., Yengibaryan N. 2010, A New Urartian Burial from Argishtihinili, Zeitchrift für Assyrologie und Vorderasiatische Archäologie, Bd. 100, S. 53-63.

ГРАНИЦЫ РАСПОЛОЖЕНИЯ И ХРОНОЛОГИЧЕСКИЕ РАМКИ КУВШИННЫХ ПОГРЕБЕНИЙ МОГИЛЬНИКА СТОЛИЦЫ АРМАВИР

Карапетян Инеса, Габриэлян Армине

Резюме

Столица Древней Армении Армавир занимает территорию одноименного холма (высота 80 м), граничащего с городом Аргиштихинили, построенным в VIII веке до н.э. на западно-восточном хребте в центральной части Араратской равнины, и территорию между селами Айкаван, Джрашен, Артагерс, Армавир.

Систематические исследования, проводимые с 1962-го года, свидетельствуют о многослойном характере Армавира: с доурартского периода (IV – начало I тыс. до н.э.) до развитого средневековья (X-XIII века). Следует отметить, что основное внимание было уделено изучению цитадели и городских кварталов, однако некрополь остался вне поля внимания исследователей.

Но в процессе предварительных раскопок в XIX в. при различных хозяйственных, строительных работах, прокладке оросительной сети и в захоронениях на современных кладбищах в различных частях города случайно были найдены погребения, датируемые начиная с эпохи ранней бронзы и до позднего средневековья, причём среди них встречались и погребения античного периода.

Производившиеся здесь захоронения относятся к традиционным типам: это грунтовые, каменные ящики, погребения с овальной кладкой, а также кувшинные, которым в данной статье уделено основное внимание.

Изучение выявленного материала позволяет уточнить границы распространения кувшинных погребений в столице Армавир, их ориентацию по отношению к сторонам света, погребальный обряд, ритуалы, а в случае наличия сопутствующего материала и путем изучения его ассортимента – установить расположение столичного некрополя и определить период его существования.

Ключевые слова – столица Армавир, Аргиштихинили, западная цитадель, погребальный обряд, кувшинные погребения, эллинистический, позднеантичный некрополь.

THE DISTRIBUTION BOUNDARIES AND CHRONOLOGICAL FRAMES OF THE JAR BURIALS OF THE NECROPOLIS AT THE CAPITAL CITY ARMAVIR

Karapetyan Inesa, Gabrielyan Armine

Abstract

Armavir, the capital of Ancient Armenia, occupies the territory of the eponymous hill (height - 80 m), bordering the city of Argishtikhinili, built in the 8th century BC on

the west-east ridge in the central part of the Ararat plain, and the area between the villages of Haykavan, Jrashen, Artagers, Armavir.

As a result of continuous studies conducted since 1962, it became clear, that Armavir was occupied in different periods. Layers from pre-Urartian period (4th – beginning of the 1st millennium BC) to the High Middle Ages (10 – 13th centuries) were revealed. The main attention of the research was focused on the study of the citadel and some parts of the city quarters, while the problem of studying the necropolis remained unsolved.

In the process of constructional works since the 19th century in various parts of the city quarters burials belonging to the periods from the Early Bronze Age to the Late Middle Ages were accidentally revealed, and among them there were those of the Classical period. The burials are represented by traditional types: pits, stone boxes, burials with oval-shaped masonry, as well as jar burials, which are the focus of this article.

The study of the material makes it possible to clarify the distribution boundaries of the jar burials in the capital Armavir, their orientation in relation to the cardinal points, funeral rites as well as dating issues.

Key words – the capital city Armavir, Argishtikhinili, the western citadel, funeral rite, jar burials, necropolis of the Classical and Hellenistic period.